ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ԱԲՈՒԼ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիս 3-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բարգէն աբդ. Սալբիյանի, վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Աբուլ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին:

Այդ օրը բազմամարդ էր Աբուլ գյուղը: Ախալքալաքից, հարակից գյուղերից, Հայաստանից, Թբիլիսիից ժամանել էին բազմաթիվ հյուրեր՝ մասնակցելու Ս. Աստվածածին եկեղեցու վերաօծման սրբազան արարողությանը: Թեմի առաջնորդին եւ շրջանի ղեկավարությանը աբուլցիները դիմավորեցին գյուղասկզբին աղ ու հացով եւ ավանդական դհոլ-զուռնայով:

Աբուլ գյուղը գտնվում է Ախալքալաքի եւ Աբուլ լեռան միջակայքում՝ լեռան հարավարեւմտյան ստորոտում՝ շրջկենտրոնից 10 կմ արեւելք՝ ծովի մակերեւույթից 1964-1985մ բարձրության վրա:

1830 թ. Կարնո գավառի Ումուտում գյուղից գաղթած հայերը հաստատվել են այդ ժամանակ հայաթափ ու ավերակ Աբուլ գյուղատեղիում եւ շենացրել այն:

Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1884-ին: Այն սրբատաշ տուֆով ընդարձակ կառույց է, եռանավ հորինվածքով, ավանդատներով, երկու զույգ սյուներով, արեւմտյան ճակտոնի գագաթին՝ զանգակատնով:

Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգվել եւ տարածքը բարեկարգվել է նույն գյուղի ծնունդ, այժմ ռուսաստանաբնակ Ստեփան Խանջյանի բարերարությամբ: Եկեղեցու բարերարը դեռեւս պատանեկան տարիներին երազել էր վերանորոգված եւ գործող տեսնել իրենց պապերի եկեղեցին, եւ Բարձրյալի ողորմածությամբ իրականություն դարձավ նրա եւ ընտանիքի երազանքը: Սրբազանը բարձր գնահատեց Խանջյան ընտանիքի աստվածահաճո գործը, նրանց փոխանցեց օրհնության գիր եւ հայ մանրանկարչության արժեքավոր մի նմուշ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Վրաստանում ՀՀ դեսպանության մշակույթի գծով խորհրդական Էդուարդ Մուրադյանը, շրջանային ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը, շրջանային վարչության նախագահ Նաիրի Իրիցյանը, Ուստիկանության պետ Սամվել Պետրոսյանը եւ պաշտոնատար այլ անձինք:

Տոնի կապակցությամբ դպրոցի բակում կազմակերպվել էր մեծ համերգային միջոցառում՝ մասնակցությամբ Գյումրիից ժամանած երգի պարի համույթի:

Ս. Աստվածածին եկեղեցու օծման ավարտին կատարվեց ավանդական մատաղի օրհնություն եւ ժողովրդական հանդիսություն:

Հաջորդ օրը՝ հուլիսի 4-ին, Ախալքալաքի հոգեւոր հովիվ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանը նորաօծ եկեղեցում մատուցեց Ս. Պատարագ եւ կատարեց համայնքային մկրտություն: Բոլոր մկրտվողներին գեղեցիկ խաչեր նվիրեց Եկեղեցու բարերար Ստեփան Խանջյանը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԽՈՋԱԲԵԿ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՕՐՕՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Հուլիս 4-ին, հանդիսապետությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե- Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբգէն աբդ. Սալբիյանի, կատարվեց օրհնության կարգ Նինոծմինդայի շրջանի Խոջաբեկ գյուղի Ս. Սարգիս եկեղեցում, որին հաջորդեց անդրանիկ Պատարագի սրբազան արարողությունը:

Խոջաբեկ գյուղը գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 16 կմ հարավ-արեւելք՝ Խանչալի լճի արեւելյան ափից 2 կմ հեռու՝ ծովի մակերեւույթից 1930-1950 մ բարձրության վրա: Հյուսիս-արեւմուտքից կից է Նինոծմինդա շրջկենտրոնին :

Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է 1840-ական թթ.: Այն համակ սրբատաշ քարերով, արեւմտյան ճակատից բացված միակ մուտքով, արեւմտյան ճակտոնին կրկնահարկ զանգակատնով շինություն է:

Եկեղեցին տեղի հոգեւոր հովիվ Տ. Արմաշ քահանա Պողոսյանի նախաձեռնությամբ վերանորոգվել եւ տարածքը բարեկարգվել է նույն գյուղի ծնունդ, այժմ ռուսապահանաբնակ Թաթուլ եւ Արմեն Ղարսլյան եղբայրների բարերարությամբ: Սրբազանը բարձր գնահատեց եղբայրների եւ մյուս աջակիցների ասպվածահաճո գործը: Առաջնորդը բարերարներին ու ժողովրդին պատգամեց վերականգնել կորցրած մեր եկեղեցական ծիսական ավանդությունները, հետեւել հոգեւոր հովվի բարի պատգամներին:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Նինոծմինդայի շրջանի սակրեբուլոյի նախագահ Վլադիմիր Ստամբոլցյանը, գլխավոր բժիշկ Կարեն Ջալալյանը, գործարար Արամ Սանոսյանը եւ այլ հյուրեր:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մի քանի եկեղեցականներ ծառայության են կոչվել Հայոց Եկեղեցու տարբեր թեմերում:

Տ. Հայկ քահանա Սահակյանը, վերադառնալով Հոլանդիայի հոգեւոր հովվությունում իր ծառայությունից, հոգեւոր սպասավորության է կոչվել Արագածոտնի թեմում:

Տ. Շավարշ քահանա Սիմոնյանը, Տ. Ոսկան քահանա Բաղումյանը եւ Տ. Եփրեմ քահանա Ջարգարյանը, ավարտելով իրենց քառասնօրյա պահեցողության շրջանը, ստացել են նոր նշանակումներ. Տ Շավարշ քահանա Սիմոնյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմի Տավուշի մարզի փոխառաջնորդությունում՝ իբրեւ Դիլիջան քաղաքի հոգեւոր հովիվ, Տ. Ոսկան քահանա Բաղումյանը նշանակվել է Սյունյաց թեմի Սյունիքի մարզի փոխառաջ-

նորդություն՝ իբրեւ Գորիս քաղաքի հոգեւոր հովիվ: Տ Եփրեմ քահանա Զարգարյանը վերադարձել է իր ծառայության վայրը՝ Արագածոտնի թեմ՝ իբրեւ Կարբի, Ուշի եւ Օհանավան գյուղերի հոգեւոր հովիվ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԾ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵՑ ԲՐԾ. ԼԵՒՈՆ-ՀՈՃԱ ՍՐԿ. ԷՅՆԱԹԵԱՆԸ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան քահանայ ձեռնադրեց բրշ. Լեւոն-Հոճա սրկ. Էյնաթեանը Ուաշինկթընի Տի. Սի.ի Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Շաբաթ յուլիս 10-ի երեկոյեան, տեղի ունեցաւ Կոչման արարողութիւնը: Իսկ ձեռնադրութիւնը՝ կիրակի՝ յուլիս 11-ին՝ Ս. Պատարագի ընթացքին՝ խարտաւիլակութեամբ Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւ արժշ.տ. Վրթանէս Ա. քհնյ. Գալայճեանի եւ այժմու հոգեւոր հովիւ արժ. տ. Յովսէփ քհնյ. Կարապետեանի: Երկու օրերն ալ Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցի փութացած էին հոծ թիւով հաւատացեալներ:

Թեմական առաջնորդ գերշ. տ. Խաժակ արք. Պարսամեան նորընծայ քահանայի ճակատն ու ձեռքերը Ս. Միւռոնով օծելէ ետք զայն վերանուանեց Տէր Յովհան:

Յաւարտ ձեռնադրութեան՝ Սրբազան Հայրը օրուան պատշաճ քարոզը տուաւ, ուր ի մէջ այլոց ըսաւ. «Այսօր Հայց. Եկեղեցւոյ հինգ տղաւար տօներէն մէկն է. մեր Տիրոջ Այլակերպութեան տօնը, որ կը կոչուի նաեւ Պայծառակերպութիւն եւ Վարդավառ: Յիսուս իր երեք աշակերտներուն հետ Թափոր լեռը բարձրացաւ եւ աղօթքի պահուն այլակերպուեցաւ. այդ պահուն լուսաւոր ամպի մը մէջէն ձայն մը ըսաւ. "Ա՛յս է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ. ա՛նոր մտիկ ըրէք": Յիսուսի ընկերացող երեք աշակերտները ականատես եղան Անոր այլակերպութեան, որ զիրենք եւս այլակերպեց եւ անոնք դարձան Քրիստոսի առաքելութեան բուռն հետեւորդները: Այսօր, այս աղօթավայրին մէջ, ձեր բոլորին ներկայութեան, նման խորհրդաւոր այլակերպութիւն մը տեղի ունեցաւ: Ձեռնադրութեամբ եւ Ս. Հոգիի ներգործութեամբ Էյնաթեան սարկաւագ նոր անձ մը դարձաւ: Այսօր ան դարձաւ այն անձը, որ Տէրը սահմանած էր: Տէր Յովհան, պատասխանելով Աստուծոյ կոչին, քահանայ ձեռնադրուեցաւ, որպէս զի ընթանալով Տիրոջ նախագծած ճամբայէն՝ ինքզինք նուիրէ իր եկեղեցւոյն եւ իր ժողովուրդին»:

Ս. Պատարագի աւարտին՝ նորընծայ Տէր Յովհան եկեղեցւոյ դասին մէջ ընդունեցաւ շնորհաւորութիւնները ներկայ հաւատացեալներուն, որոնք համբուրեցին Ս. Միւռոնով օծուած ձեռքը:

Ապա եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ ճաշկերոյթ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ՅՈՎՀԱՆ ՔՀՆՅ. ԷՅՆԱԹԵԱՆ

Ծնած է Երեւան 1967 թուականին, երաժշտութեան ճիւղին մէջ պսակաւորի եւ արուեստի մագիստրոսի աստիճաններ ստացած է Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցէն եւ Մոսկուայի պետական երաժշտանոցէն: Մեծցած ըլլալով Սովետական Հայաստանի մէջ՝ առիթը չէ ունեցած եկեղեցի յաճախելու եւ քրիստոնէական հաւատքի մասին ծանօթութիւններ ունենալու: Իր մեծ ծնողներն են որ առաջին անգամ իրեն հաստուածներ կարդացած Ս. Գիրքէն: 1999 թուականին Ուաշինկթն Տի. Սի. հաստատուելէ ետք է որ զործօն մասնակցութիւն ունեցած է Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ ծիսական կեանքին մէջ: Եւ այս շրջանին է առաջին անգամ ըլլալով կոչումը զգացած է եկեղեցւոյ ծառայելու: Ան նշանակուած է հովիւի օգնական Ս. Աստուածածին եկեղեցւոյ, ուր եղած է դպիր, Գիրակնօրեայ վարժարանի ուսուցիչ, երգեհոնահար եւ կազմած է «Նարեկ» զանգակային նուագախումբը: Ունի հեղինակութիւններ եւ պատրաստած է խորասալիկներ:Աստուածաբանութեան դասընթացքներու հետեւած է Ուաշինկթընի կաթողիկէ համալսարանին մէջ: Անցեալ տարի շրջանաւարտ եղած է Ս. Ներսէս Ընծայարանէն: Նորընծայ Տէր Հովհան իր քառասունքի շրջանը պիտի անցընէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Տէր Յովհան եւ իր տիկինը՝ Նարինէ, ունին երկու զաւակ՝ Տաթեւիկ եւ Ալեքսանդրը:

ԴԻՒԱՆ ԱՌԱՔՆՈՐԴԱՐԱՆԻ
Յուլիս 13, 2010
Նիւ Եորք Ն. Ե.

ԿԱՏԱՐՎԵՑ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի ուսումնական հարկաբաժնին կից մասնաշենքի հիմնարկեքը: Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները եւ շինության բարերարներ Պետրոս եւ Աննա Օրունջանկչիելների զավակ Սայաթ Օրունջանկչիելը:

Արարողության ընթացքում Նորին Սրբությունն օրհնեց կառուցվող շինության հիմքերը, որ ծառայելու է իբրեւ հանդիսությունների դահլիճ եւ մարզասրահ Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի սաների համար: Ապա ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանն ընթերցեց կառույցի շինարարության հիշատակարանը, որը զետեղվեց շինության հիմքի մեջ:

Վերջում իր պատգամը ներկաներին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ ճեմարանական կյանքի բարելավումը նոր խթան պիտի դառնա, որպեսզի ճեմարանի սաները՝ իբրեւ ապագա եկեղեցականներ, էլ ավելի եռանդով ու նվիրումով շարունակեն ուսումը: Նոր մասնաշենքի կառուցման առիթով Նորին

Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը հղեց մասնաշենքի բարերարներին՝ ամերիկաբնակ Պետրոս եւ Աննա Օրունջակչիել ամուսիններին՝ մաղթելով նրանց ուժ, եռանդ ու հաջողություն, որպեսզի կարողանան իրենց ազգաշեն եւ եկեղեցանվեր ծառայությունը շարունակել ինչպես ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմում, այնպես էլ Հայրենիքում:

Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց նաեւ կառույցի ճարտարապետ Ջիմ Թորոսյանին եւ շինարարին՝ ՀՀ Շինարարների միության նախագահ Գագիկ Գալստյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ